

գծերով եղբերքին և բարձրութեամբ մէջ տեղում, ուր արձանագրի բնագիրն է յիշում, կարապետում էր արձանագրի փորագրելոյն: Արմաւրի քարերի տաշելու մի այլ եղանակը, որ նկատել է կոմս Ուլարովը, այն է՝ խոր բուրբաձե փոսեր քարերի կողերից մէկում, դարձեալ վկայում են ոչ յօգուտ հայկական, այլ Ուրարտեան ճարտարապետութեան: Մենք արդէն նկատեցինք, որ Դաշպուտունի քարը (N. 2) մի կողմից ունի այդպիսի փոսեր, որոնց նմանը մենք գտնում էինք արմաւրեան բլրի վրայ ընկած շատ անարձանագիր քարերի վրայ: Ուրովհետեւ արձանագիր քարերը, անկասկած, կ'պնդում էին պատեւի վրայ, ուստի այնտեղ ամրացնելու համար երբեմն փոսեր էին շինում այդ քարերի միջով: Նոյնպիսի քարերի մեջ հանդիպեցանք Դաշպուտունի մօտ տեքալիների մէջ: Բաց ի Պորանից՝ կոմս Ուլարովը յիշում է, թէ ինչ եղանակով որմեր էին շինում, պատի արտաքին և ներքին կողմից գնելով կոփածոյ քարեր, իսկ միջում անտաշ մանր քարեր. և որմն կանգնելու այդ եղանակը նա վերագրում է դարձեալ Դ զարուն Գրիստունի: Սակայն այդ նշաններն չեն վկայում յօգուտ յիշեալ գարու. դա կարող էր կրկնուել ամենայն դարեւում զուտ ֆիզիքական կարեւորութիւնից: Մենք գիտենք, որ հնագոյն ժամանակներում, բարեխցիք ևս, որմն կանգնելու միջոցին, արտաքուստ գնում էին այլուած աղիւսներ, իսկ միջում մեծ քանակութեամբ չայրուածները: Շեշտելու է այստեղ և այն հանգամանքը, որ Արմաւրի աշտարակը բառանկիւնի ձեւ ունի, մինչդեռ յետին հայկական ժամանակների աշտարակները առ հասարակ բոլորածն են:

Այդ շինութեան նիւթերը, քարերի տաշումն և շինութեան ձեւը Արմաւրում անպայման վկայում են յօգուտ նոցա Ուրարտեան ծագման: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ շէնքերի հին հիմունքը կարող էին գործածուել յետին ժամանակի շինութիւնների համար, հին ոճը պահպանուել երկար դարերի ընթացքում, մինչև վերջին ժամանակաշրջանը. բայց Արմաւրի շէնքերի վրայ տեսնել հայկական ճարտարապետու-

թեան անհերքելի և ակներև նշաններ, ինչպէս Գաւնիում, ոչինչ հիմն չկայ: Եթէ դրան յարելու լինիրք այն հանգամանքը, որ ոչին տեղում գտնվեցան այնքան բազմաթիւ արձանագրութիւններ, Անգրկովկասում գրանցութեան մի ամբողջ կէտը, թէ նոցա բովանդակութիւնը ակնարկում է մի որոշ տեղի վրայ, այն ժամանակ փարատում են բոլոր կասկածները և բոլոր խոչնդոտներն ընդունելու, թէ արդի արմաւրեան բլուրը Ուրարտեան շրջանում դարդարուած էր շէնքերով, ունէր քաղաքական նշանակութիւն, իւր երկարատեւ պատմութիւնը, և թէ բնական գիր արձանագրութիւնների Argistihinili-ն և Մ. Խորենացույ աւանդութեան Արմաւրին մի և նոյն քաղաքն են:

Ե. Յովսէփյան

Շառաշարելի



## ՎԱՆԱՅ ԵՐԱՅԱԿԻ ԿԶԶԻՆԵՐԸ

### ԱՂԹԱՄԱՐ

(Շար. յէջ 150)



ԲԱԳԻԿ Արծուրին այլ չի գանձադիր արժիւթ իւր ծրագիրն ի պոքս գնելու: Ըստ հին կոնգրեսի կղզոյս, ուղեւոր յայտնել իւր միտքն և գիտատեղութիւնը՝ նաև իւր աշխարհի բոլոր բնակաց, հրաման կը հանէ և առ ինքն կը կանչէ բոլոր աշխարհին եպիսկոպոսները, բաժանները, ազնաւականները և ուսմիկները, և կ'ըսէ. Միտքս գրեք եմ՝ կղզիս, մեր աշխարհի ամուր ասպատանարան մը դարձնել, որ ժամանակներ անցելէ վերջ, երբ թշնամիք յարձակին մեր սերնդոց վրայ, փախչին և մտնեն յԱղթամար և ածորինաց ձեռքէն ազատին: Նոյն ժամանակ կղզին եկող բազմութեան միջէն, թագաւորի ապիւրհէն և Դուկաս ոմն վարդապետ և տէր Մովսէս արքեպիսկոպոս, և շատ մը զօրքեր՝ որ թա-

գաւարին տեսութեան էին եկեր, և կ'ընեն, Շատ բարի և իմաստուն խորհուրդ եւ մտածեր, Տէր Աստուած խնայիքդ կատարէ, ամենքս միաբան գլեզ կ'ազաւենը, որ այդ բանը ընեն, որ պիտի լինի քեզ յիշատակ մինչև աշխարհիս վերջ, և ամեն մարդ՝ որ փախչելով յԱղթամար ազատի անօրէններէն՝ քո ծնողաց և քո հօգուցյ Աստուած ողորմի պիտի ըսեն: Անկարագրելի էր Արծրունի թագաւորի ուրախութիւնը, երբ շեց այս խօսքերը թաղմութեան բերնէն, զի իւր մըտաց մէջ յղացած ծրագիրն, սրղ սկիզբն առնելու այնչափ կը փութար, ոչ միայն ընդունելի՝ այլ և հաճելի ու ըղձալի էր հայ ժողովրդեան և:

Այնուհետեւ Գագկայ հրամանով արջունի հրովարտականքի՝ ուղարկուին այլևայլ աշխարհներ, որ բազմաթիւ և քաջ արուեստաւորներ հաւաքուին յԱղթամար, սկսելու և իրագործելու թագաւորին մտաց ծրագիրը և Հրովարտականք ուղարկուելէն քիչ շաբաթներ վերջ, կը սկսին թափել յԱղթամար ճարտարապետաց և արուեստաւորաց ստուար բազմութիւն մը, Շիրազէն, Ալլըրմանէն, Անկիւրիայէն, Կ. Պոլսէն, Տրապիզոնէն, Պաղատաւէն, Մաւրաւանէն, Ասորեստանէն և այլ ուրիշ հեռաւոր տեղերէ: Այս բազմաթիւ աշխատաւորք՝ հետեւեալ կերպով բաժնուած էին. ԳՃԾ (350) հոգի ճարտարապետ էին, Ռու ՆՃ (4500) հոգի աշկերտ, ԹՃ (900) հոգի քարկտրող կամ քարակոփ, ԳՌ (3000) հոգի ձեռնաւոր, ԳՃ (400) կարգաւորք<sup>2</sup>. կ'աշխա-

տէին նաեւ թագաւորական զօրքերը և Ծովաւին վրայ ալ 7 նաւ անդապար շարժման մէջ էին, բերելով ցամաքէն քար, կիր, փայտ, և այլ ամենայն շինութեանց հարկաւոր նիւթեր:

Վերոյիշեալ արուեստաւորաց զկատարճարտարապետ և հրամայող էր նոյն ինքն թագաւորն, որ նախ փոքր գտնելով կղզւոյ տաճարածութիւնն իւր նպատակներու համար, առաջին զործը կ'ըլլայ զայն ընդարձակելը<sup>1</sup>, լար ի ձեռին չափելով և նշանակելով՝ թէ կղզւոյ շուրջը պատող ծովակի աւելի ո՞ր մասերը պէտք էր ցամաք դարձնել, Գագկի կը հրամայէ աշխատաւորաց որ հաւաքին մեծութեամբ քարեր նետեն ի ծովակն: Որոշ չենք գիտեր, և Արծրունի պատմին այլ մեզ չի յայտներ, թէ ո՞րքան ժամանակ տեւց այս մեծ և դժուարին աշխատութիւնն. բայց յայտնի է որ շատ ու շատ ամիսներ տեւած պիտի ըլլայ, նա մանաւանդ տարիներ, զի այժմ մեր տառնասից և գիտութեանց ծաղկած դարուն մէջ անգամ, մարտարական շինութիւնք՝ ոչ միայն շատ ամիսներու, այլ և ուր քանի. երկար տարիներու կը կարտան:

Բայց 6150 վարձուորաց և անթիւ տաքունական զօրաց գիշեր ու ցերեկ անընդհատ աշխատութեամբ, և ևս առաւել մեծ ճարտարապետ թագաւորի հսկողութեամբ, զործը առաջ կ'երթայր ամենայն արագութեամբ և Ծովակի յետ երկար և շարունակ մաքաւեցում և պատերազմելու ընդդէմ իրեն մէջ նետուած ժայռից և քարանց, հուսկ ուրեմն յաղթուելով անոնցմէ կը հարկադրուի

1. Թոմաս Արծրունին այլ կերպով կը պատմէ վերոյիշեալ տուրքն. նա չէիշէ թէ Գագկի հրաման հանց որ ամենայն ոք ժողովի յԱղթամար՝ այլ ամբարտապի, պարպիւի և նաւահանդատի շինութիւնք պատմելէ վերջ՝ կ'ըսէ. ամեն կողմէ թափեցան ի կղզին, իշխաններ և տէրեր, ազատներ և ասովկներ, եպիսկոպոսներ և կրօնաւորներ, որպէս զի հրաման առնելով թագաւորէն, Աղթամարը շէնքերով և բերդերով ամրացրեն, և քաղաք ապառառնի դարձնեն ընդդէմ հինից թշնամեաց. և թագաւորն ալ զփայլով ժողովրդեան խնդրէր չի մերժեց: 2. Զգիւթմ կարգաւորք ըսելով հոգեւորականք, քահանաներ կը հասկնայ կոնդակագիրն, թէ աշխարհական աստիճանաւորք:

2. Գագկայ յԱղթամար շինութիւն սկսելն համարելի է 910 թուին, զի ինչպէս վերջը պիտի տեսնեմք, կղզւոյ ահեղ ամբարտապէր, շրջապարսպը, նաւահանդիւսը, արքայական ապարանք և շտեմարանք, քաղաքացեաց և զինուորաց բնակարանք, և այլն, ըստ Արծրունւոյ և կոնդակի, կատարուեցան 5 տարուան մէջ. իսկ հրաշակներտ սուրբ Խաչի տաճարին շինութիւնն այլ տեւած է 6 տարի: Այս 5 և 6 տարիներն զուամբելով՝ երբ յաւելուենք 910 թուոյն վրայ, այն ժամանակ կ'ունենանք 921 թուականը, որ է հէշտ Աղթամարայ եկեղեցւոյ նաւակառուաց տարին. այս կերպով ժամանակադրական հէշտութիւն պահած կը լինինք:


տեղի տալ նոցա և ետ ետ քաշուիլ, լի գառ-  
նութեամբ և վրէժխնդրութեամբ ։ Ահնդ ամ-  
բարտակը կը բարձրանայ կղզւոյս շուրջը, ծա-  
վակի մակերևութէն հինգ կանգուն աւելի  
բարձր ։ Այս ամբարտակի վրայ կը բարձրա-  
ցրեն կղզւոյս շրջապարիսպը, որոյ երկայնու-  
թիւնն էր հինգ ձիարչաւ, կամ 625 երկրա-  
չափական քայլ, և զոր սքանչուցած՝ հետեւալ  
բառերով կը նկարագրէ պատմիչն ։ « Էւ պա-  
րիսպն է հրաշակերտ, անգրգիւնբալ բարձրա-  
բերձ լայնանիստ բրդամբք և բարձրացեալ  
աշտարակօր զարդարեալ, անկիւնաւոր խորա-  
նունման՝ տախտաձև յինքնան ունելով գա-  
հոյք զբոսանաց, յորում հանգերձ որդւովք  
և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր աը-  
քայ<sup>1</sup> » ։ Կղզւոյն հարկաւոր լինելով և մի  
նաւահանգիստ, Գազիկ տունց երկար ծա-  
մանակ անցնելու՝ իսկոյն կ'որոշէ, կտրել  
Պալով ծովակի մէկ մասն և շրջապատելով  
զայն՝ ամբարտակներով ծովակի յատակէն ի  
վեր, կը ձևանայ գեղեցիկ և ըստ բաւականի  
ընդարձակ արհեստական նաւահանգիստ մը ։  
Այնպէս ապտմիչ կղզւոյս պարսպին մի  
միայն մուտք կը յիշատակէ ըսելով ։ « Ի  
շրթունս խորայտակ հիմանց ծովուն՝ գնէ  
դունս անաւորատես հաստանցողոյս բեւեա-  
պինոս » ։ և ինչպէս կ'երևի այդ մտից երկա-  
թեայ ծանր դռները կը բացուէին դէպ ի նո-  
րաշէն նաւահանգիստը ։ Վերոյիշեալ պատ-  
միչը, որ Աղթամարայ շինուածոց վրայ  
միշտ հրաշացած կը զրէ, և մինչև անգամ  
զայնս աշխարհի հրաշալեաց կարգը կը դասէ,  
իւր գեղեցիկ նկարագրութեամբք չի բուա-  
կանանալ, և կարծես ուզելով ցուցանել Արծ-  
րունի թագաւորի իմաստութեան և ճարտա-  
րագէտ հանձնարոյն առաւելութիւնը, կը բազ-  
դատէ կղզւոյս ամբարտակը՝ բարեւաջի թա-  
գուհոյ ամբարտակի հետ, և սա աւելի անեղ,  
աւելի գերազանց և մեծ գործ կը համարի  
քան զայն. նոյնպէս նաև նաւահանգիստը  
բաղադրելով Միծին Ալեքսանդրի շինել  
ուտած Մակեդոնիոյ արհեստական նաւա-  
հանգստի հետ, Գազիկայն աւելի բարձր կը

գտնէ ։ Կարծեմ՝ աւելորդ չի լինիր, մանա-  
ւանդ թէ ցահկալի իսկ է, յատալ բերել  
նոս, պատմագրի այս բաղդատութիւնքը պա-  
րունակող իսկական խօսքերը ։ « ... Բագում  
նաւաց յորինեալ խաղաղ և անքոյթ նաւա-  
հանգիստ, բարձրագոյն հրաշակերտեաց քան  
զԱլեքսանդրին ի Սիսիւցիոն քաղաքի, և  
որպէս ինձ թուի՝ զանցոյց զարմանալեօք  
զՇաւրիստեան փարուածոյ սենեկօքն, և զամ-  
բարտակաւ գետոյն որ առ ստորոտաւ լերինն  
վարագայ, զի նորայն գոնեա ի վերայ ցա-  
մաքի, իսկ սա ի մեծ խորոց ծովուս՝ ա-  
րունստակեալ՝ հարստահարէ զամենայն միտս  
և զգործս իմաստնոցն առ ի քան զինքն ե-  
ղելոց » ։

Աղթամարը յետ մեծագործ ամբարտակօր  
ըստ բաւականի ընդարձակուելէ և աշտարա-  
կագործի ամուր պարագօք շրջապատուելէ, կը  
գտնեայ մի կատարեալ անեղ ամրոց ։ Արդէն  
կղզւոյ բնական դիրքն այլ ամրոց գառնալու  
ամենայն յատկութիւն ունէր, ինչպէս և  
եղած էր ի հնումն ։ Իւր մէջ կը բարձրա-  
նայր ժայռոտ լեռ մը, ուր կը կազմէր կղզւոյ  
գագաթը. այդ լեռան կողքերու վրայ, զանա-  
զան զիւրերով շինուեցան արքայական ծո-  
վահայեաց ապարանքներ և զուարճութեանց  
վայրեր ։ Լեռը ստորոտէն շրջապատուեցաւ  
առաւմաձև վերջացած մի ուրիշ ներքին պա-  
րտապով. այդ պարիսպն այլ զուրկ չէր աշտա-  
րակներէ, որոց ծայրերը հանգիսից ժամա-  
նակ ցերեկը կը սաւառնէին զոյնզոյնս աը-  
ծուէնշան դռներ, և զիւրեր կը ցոյլային  
կը փայլիլէին կանաչ կարմիր լոյսերով ։ Այս  
պարսպէն ներս մնացած բոլոր լեռն կամ  
լաւ ևս բլուրն՝ ռահմանեց Գազիկ իբրև ներք-  
նաբերդ և երկրորդ ապաստանարան կղզւոյն ։  
այդ բլրան քաղաքը շինուեցաւ անմասնելի  
ամրոց մը. բաց ի արքայական սպարաճնէ-  
րէ՝ շինուցան նաև մեծամեծ ամբարանոցներ  
և շտեմարաններ ։ Խառքաւորք տեսակ նիւ-  
թոց սահմանուած էին առանձին առանձին  
բաժանմունքներ. երեք առեւ յատկացած էին  
զանձուց, օւրիշ քանի մը տուն զգեստուց  
և ուտելեաց, չորս տան մէջ ալ կը պա-  
հուէին գնդաժայր գաւազաններ, զրահներ,  
սրբը, նետեր, կայիններ և այլ ուրիշ նոյն

ժամանակին զործածուող պատերազմական զէնքեր : Բայրոյ այս բլրի շուրջը և վրայ բարձրացած շէնքերու, և զանազան ուղղութեամբ շինուած ճանապարհաց մէջ, այնպիսի չափակցութիւն և ճարտարապետական համեմատութիւն կար, որ տեսնողը կը զմայլէր, կը սքանչանար : Ճանապարհաց ուղից եւ զերբններ և ուրիշ այլ և այլ տեղեր մշակութեան և տնկութեան պտղատու և հովանաւոր ծառաց տեսակներ . կղզւոյ զանազան

կողմերն այլ զարդարութեան բուրաստանն ըով, մեր աշխարհի յատուկ հազար ու մէկ տեսակ գոյնզգոյն հոտուէտ ծաղկամբք : Այս ծառերն և ծաղկուէք, կ'ըսէ ժամանակակից և ականատես պատմիչն, կ'ուզուէին « ի բարեհամ և տեսպառ տղերքէն, որ ականարկելովն Աստուծոյ՝ կայ ի մէջ քաղաքին՝ »<sup>1</sup> Գաղկայ ի կղզիս զալէն և շինութիւններ սկսելէ հազիւ 5 տարի կանցնի, անուպատ ամայի Աղթամարը կը գտնուայ ոչ միայն



ՍՈՒՐԲ ԽԱՅԻ ՏԱՃԱՐԸ

մի կատարեալ ամրոց, այլ և կը լինի բազմամարդ բաղաբ մը : Թագաւորի հրամանով բաց էին Աղթամարայ զոներն այն ամեն անձանց դիմաց, որք կը ցանկային բնականալ ի կղզին : Այս պատճառաւ քիչ ժամանակէ մէջ լեցուեցաւ Աղթամարը խուռ բազմութեամբ . ամբողջ կղզին բաժնելով փողոցներու, շինութեան կրպակներ, վանատանոցներ, զործարաններ, բնակարաններ և այլ ամենայն շինուածք, որ հարկաւոր կը լինին քաղաքի մը :

Գաղկի՝ Աղթամարը բազմամարդ և արջայանիտ ամուր քաղաք մի դարձնելէ մեր, կարծես յատուածային ի՞նչ ազգեցութեան կը մըլտի՝ բարձրացնելու կղզւոյ կեդրոնը Աստուծոյ մեծաշէն տաճար մը : Կղզւոյ միւս բոլոր շէնքերէն աւելի, իւր հարստութեան

1. Այդպիսի աղբիւր այժմ չկայ Աղթամար . անշուշտ երկայն դարերու մէջ, « զեռէ, մարդկային թէ բնական բռնութենէ խափանուելէ :

մեծագոյն մասը սպառեց այս տաճարի շինութեան, որոյ վրայ ոչ միայն ազգային մասնաւորներ, այլ և օտար այցելողք կղզւոյս, սքանչացած կը խօսին և կը համարին բովանակող մեր աշխարհի շինուածոց մէջ՝ իւր տեսակով՝ առաջին և եզակիս գործ հայկական ճարտարապետութեան, թագաւորը կղզւոյ ամբարտակը, իւր ապարանքները և այլ շինութիւններ բարձրացրնող արուեստաւորներէն կ'ընտրէ իմաստուն և հանճարեղ ճարտարապետները, և կ'ըսէ. Ձեզ կը մնայ այսուհետեւ կառուցանել կղզւոյս մէջ, փառաւոր և վայելուչ տաճար մը. քառասուն կանգուն լայնութեամբ և քառասուն երկայնութեամբ և նոյնչափ բարձրութեամբ. իսկ սպտեբու հաստութիւնն կամ լայնութիւնն էր, ըստ Արծրունոյ, երեք մեծարայլութեամբ չափոյ, կամ ըստ կոնյակին՝ երեք շէք լայնութեամբ: Ինքը թագաւորը զբողոքած լինելով աշխարհի արտաքին գործերով, այս անգամ տաճարի ճարտարապետութիւնը, կը յանձնէ Մանուէլ՝ առուն ուրումն կրօնաւորի, այր լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր:

Փրկչական 915 թուին սկսան խաչառն տաճարի հիմքը գնել մեծ հանդիսով: Նախ յատակը դրին մեծամեծ և մանր քարեր. յետոյ ըստ կոնյակագրին, « Արծիճ ու պղինձ ու սպգրբաւ հային չ'ի հիմն լընին ի հետ ըզրխտին որ պատն ուր ուր քանց պողպատ կու լինէր »: Այս կերպով հիմունքն սկսեալ

մինչև տաճարի տանիքը բարձրացան զօրաւոր սրմունքը, որոց համար բազմաթիւ նաւեր ցամաքէն կը բերէին, մեր աշխարհի քարաւանասաց լեռներէն եկած քարերու ամենըն, տիր տեսակներ. նոյն իսկ Քաղէշ գաւառի էդոտոմ գիւղի հոյակապ բերդը քանդուեցաւ, որ սեփականութիւն էր Զուրաբիկ առուն կուպաշտ ցեղի մը, և կոփածոյ մեծահաստք քարերն զործածուեցան սոյն տաճարի շինութեան: Բաց ի կապարէ և պղնձէ, որոց չափն չգիտեմք, զործածուեցաւ նաեւ երկու հարիւր հազար լիտր երկաթ: Ինչպէս երկաթն, նոյնպէս և կապար՝ ահշուշտ բերուած են վաւարաբանի Ռշտունեաց գաւառի սահմանաւ կից երկաթահատաց և կապարահատաց լեռներէն: Միանուէլ ճարտարապետը շտեղծ իւր բոլոր ճիգը թակել, մինչև իւր օրերը մեր աշխարհում գտնուած տաճարներէն, ամենէն փառաւորը, ամենէն շքեղը և ամենէն հոյակապը կառուցանելու համար: Տաճարիս ձևը առանձին խորհրդով մը գրեթէ նման յօրինեցին Էջմիածնի, միայն սա անսխն էր և քիչ մը փոքր քան զայն. հրաշայի էր բարձրակառոյց լինութիւնը, որ արտաքրտառ պատուած լինելով ոսկեայ թիթեղներով, արևու ճառագայթներէն կը շողողային կը վառվէին: Արդէն տաճարի դիրքը կղզւոյ մէջ ամենէն փառաւորն էր, և ժողակի արեւելեան և հարաւային շրջականներէն հրաշայի կերպով կը տեսնուէր իւր բարձրաբերձ ոսկեձեղուն խաչակիր կաթովի լիւնին: Արտաքին որմունքն, որք կազմուած էին կոփածոյ քարերէ, զարդարուեցան նոյն ժամանակի արուեստից յառաջարկութեան համեմատ հրաշայի բարձրաքանդակներով: Այդ քանդակաց երեւոյթն առնուած էին մեծաւ մասամբ հին և նոր կտակարաններէն, սկսեալ յարարչութենէ մինչև Քրիստոսի համբարձումը կատարուած բոլոր նշանաւոր զէպքերով: Ականատես ուղեւորն Տէյրոյ, իրեն համար իբրև աւելի հետաքրքրական կը յիշատակէ այդ բարձրաքանդակներէն մին. Արամ և Եւա կեցած են երկուստը զբախտի մէջ, երկուքի մէջ սեղ կայ խնձորենի մը, յորմէ կը պատարաստուի Եւա փոքրնելու հատ մը և տալու Արամայ: Յիշե՛նք նաև Արամահմու զօր,

1. ՄԷԷ. Հ. ՂԱԿ. Ա. Ինճիհանեան՝ Արծրունի պատմիկ խոսքերու վրայ հիմնուելով, իւր Հնախոսութիւն Հայաստանի զոյց Գրք հատորի մէջ, 1440 երեսը, այս Մանուէլէն զատ կը մէջէն նաև անհետն կրօնաւոր քանդակագործ մը, որոյ ձեռաց արդիւնք կը համարի Աշխմարայ տաճարի բարձրաքանդակները: Մնայլոս երբ ձեռքերնին առնուեք և ընթերցուեք Աշխմարայ կոնգալը, յայտ յանդիման պետի տեսնեք, որ այդ անհուն կրօնաւոր քանդակաւորը, է նոյն ինքն ճարտարապետ Մանուէլն, զորքը, որ կրօնաւոր է եղեր, և ի կոնյակին կը կոչուի տէր մակիրով հետեւեալ կերպով. « Եւ ապա ամենիմաստ պիտութեամբն որ տուեալ էր նմա ի վերուստ՝ ահի Մանուէլին հրաշագործէ, զեկեղեցին զարմանազարծ արուեստիւ. և ձեռն տալ նկարել զքարինն ճշգրտագործ նմանահանութեան »:

Յոգիստիպա մահառուժն, փրկչի մասնակիցն  
 Յուզպէն, և այլն, որոնք ամենքն այլ ժաւ-  
 մանակակից և ականատես պատմի՜ր մի մի-  
 հրաշալիք թուած կ'երևին ։ Այս բոլորը  
 քանդակուած էին բոտ բնական մեծութեան ,  
 մարդապի բարձրութեամբ ։ Իւրաքանչիւր  
 պատկեր կամ սեռաբան առնուած էին ա-  
 ղառէին առանձին , խորդի որք թերու և զա-  
 նազան բռնող տներեց հրաւածքներէ ձևա-  
 ցած զարգացուն յղանակաց մէջ, որոնք նայն-  
 պէս քանդակուած էին նոյն կովածոյ քարե-  
 րէն ։ Սրբազան պատմութեան յատուկ տե-  
 սարաններէ զատ քանդակուած էին նաև այլ-  
 ևայլ թելչոց , սողնոց և կենդանեաց նկար-  
 ներ . ինչպէս , առիւծ , վագր , ցուլ , խոզ ,  
 արջ , ևայլ քաղիքի , որոնք անշուշտ ըստ հնարի-  
 մաց մնաց քանդակութեան , ունէին իրենց խոր-  
 հրողական նշանակութիւններն ։

Ինչպէս մեր ամենայն եկեղեցիք, նոյնպէս և տաճարս ունէր երեք զոներ, որոց փառաւոր էին քանդակազարկ եղբրքնհին։ Տնոնեք, ինչպէս կը նկարագրէ պատմիչն տաճարին զոները. «Եւ է փառք տաճարին ահեղ իմն և զարմանալի. եղեալ են ի նմա զորունջ հասուածոյք մանր յօրինուածով և հրաշայի գեղցեղմամբ, ի բառայն իւրեանց երկբայցիկք և են օգարերք զովացուցիչք. իսկ հապ առ միխեանս զլոյլ երևին իբրեւ զմի պատկեր»<sup>1</sup> ։

Հարաւային որմնյն արտաքին կողմը, դէպ ի վեր տանիքի մօտ, հեռանալ կիսեղծ խռչու-  
րատառ անձանագրութիւնն կ'երևի մինչև  
դասօր.

•• **ԽԱՐՀԱԿԱԼ ԹԱԳԱ**

## ከባለቤቱ...

## ՀԱՅԿԱԶԵԱՆ

... ՏԻ ԶԳՈՒՄԲԻԹ

... 20308

Այս պահասանոր արձանադրութենէն սրոյ

չի հասկացցուի թէ երբ և յոմմէ՞ գրուած է, զի էական կտորը թուականը պակաս է կամ եղծեալ, պակաս է նաև գրել տուողի աշնունը. այս միայն յայտնի է որ արձանաւ գրութիւնս կը վերաբերի տաճարի գմբէթի կամ կաթողիկոսի շինութեան: Ոչ տարձա՞նագրութիւն եթէ՞ չհամարինք ի Գապկայ մնացած, այն ժամանակ ինձ հաւանական կը թուի կարծել, որ քահպետուած է Աշխարհարայ Ստեփանոս (ԳԻ՞՞?) կաթողիկոսի մասնակէն որ ըստ կոնդակին, ինչպէս ի վերջ չպիտի տեսնենք, բայց յայտը շինութեանը. « Սուրբ խաչի գմբէթն աւելց, 12 քառ. ի հարուակցեց շինեալ »:

Տաճարը ունեցեր է անշուշտ ի հումանն և իւր զանգակատունն, որ յընթացս երկար դարուց քայքայեր է, զի այժմեան սիւնաւազարդ զանգակատունն, որ կից է հարաւային դարան, նորաշէն համալսարան է ի հայ տեւորացաց: Այս զանգակատունը կը բարձրանայ մինչև եկեղեցւոյ տանիքը, հիմքին՝ կ'ակօր շորս սիւններով, իսկ միջին յարկը ունի վեց սիւներ. այս տեղէն կայ և բուռ մը, ուսւկից կը մացուի յեկեղեցեցին ի տեղի աղօթից Գազկայ թապաւորի և թաճարայ թապաւնոյ: Թաճարի աղօթից տեղի կ'աւանդ՝ կը նմանի փառաւոր ամպիոնի մը, զարդարուած ստիււռաձև քանդակներով և այլ և այլ նկարներով. ծայր արդարայայել ճամփոնը, հին ժամանակի սէնէր և իւր կամարաձև աստիճանները ելնելու և իջնելու համար, որը այժմ՝ չքերին: Շէքեղազարդ էր ևս տաճարի ներքը. արեւելեան կողմն կառուցուած էր անագ խորանը, որոյ նկարապիւրն լսեցը կնդակէն. « Ունի խորանն կամարակիցս և անկիւնն և շրջապատս դեղազործ յոսկոյ և յարծաթոյ և յաւկանց պատանակահաց, անթիւ մտաց է ասել է անշննելի աչաց »: Պատները գարգառուած էին ֆրիսատիս անօրէնութեանց և սքեց զեւղանկար պատկերներով: Խորանի արեւմտակողմը կամարի վրայ քանդակուած էր հրաշալի կերպով ֆրիշի պատկերը, և զիմացը արեւելեան կամարի վրայ Գազկայ փառազարդ պատկերը, որ մեծապայծառ հաւատով իւր բազկաց վրայ բարձած իւրաշէն եկեղեցին, իբրև մասնաշարժ չցուած ոսկի սափար մը և

4. *Матем. сб.* *Углубленные курсы*. 1832, 52  
532:

կամ իբրեւ տուփ մը լի ամենայն ահուշա-  
հոտութեամբ, կը նուիրէ փրկչին. զլուսը  
շնորհայից և հեզ կերպով խոնարհած, որ-  
պէս թէ մեղացը թողութիւն կը խնդրէ և  
աշխարհի խաղաղութիւն և աստուածային ան-  
պակաս օրհնութիւնք : Աւել շլացընելու շափ  
փառաւոր էր և Սրբութիւն սրբոցն, սքանչելի էին  
արծաթեպատ զոններն լի ոսկեհուն զարդիւք :  
Այլ և այլ ոսկեպատ պատկերներ՝ առնուած էին  
թանկագին ակունքներով և մարգարտահիւս  
զարդերով ձևացած շրջանակաց մէջ : Ճօխ էին  
նաեւ բոլոր արծաթեղէն և ոսկեղէն սպաւնքն,  
որոց համար ականատես պատմիչն զմայլած  
կը վկայէ, թէ « Անասելի էր և անպատմելի  
բերանոյ, և աչաց է անառեւ այնպէս զարմա-  
նալի գործ », և յետոյ կը յաւելու. « Աս-  
տանոր կատարեցան մարգարէութեանն նուպր,  
թէ ուրախ լին անապատ ծարաւի. և զար-  
փաւ՝ եթէ ցնծաոցէ երկիր և ուրախ եղե-  
ցին կղզիք բազում » : Չի արդարեւ երբեմն  
անապատ, անմարդի, ամալի կղզիս, բիշ  
ժամանակի մէջ, մեծագոր և հանճարեղ ար-  
ծրունի թագաւորի մը ձեռքով, զարձաւ Աս-  
տուծոյ փառաւոր քաղաք մը և Հիմնարկու-  
թեան թուականէն անցան վեց տարիներ,  
և հայկական ԳՃՀ (== 921) թուականին,  
աւարտեցաւ գերազանց տաճարի շինութիւնն  
վերուստ ի վայր զարմանալի սեպեամբ :

Այսուհետեւ կը մնար մեծահանդէս կառա-  
րել տաճարիս նաւակատիւքը, որոց համարան ու  
հոշակն արդէն ի վաղուց տարածուել էին մեր  
աշխարհի ամեն ոսկիւնները : Գարնանային  
զեզազուրծ աւուրք գեռ նոր էին սկսեր, երբ  
սկսան Սրբամարցիքը Գաղկապ կարգադրութեան  
համեմատ՝ պատրաստութիւններ անհնել պոյ  
հանդիսի համար, որ պիտի կատարուէր ոչ  
միայն իբրեւ լոկ եկեղեցական հանդէս, այլ  
և պիտի յաջորդէին նաեւ զանազան աշխար-  
հական հանդէսներ :

Շարայարեյի

## ՀԱՅԳԻՒԾԱԿ

ԿԱՍ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒԾԱՐԱՌՈՒԹԻՒՆ

Երգի տարիէն աւելի է՝ որ լոյս տեսած  
է Կ. Ղեւոնդ վ. Ալիշանի գեղեցիկ երկասիրու-  
թիւններէ մին, Հայօթի կոչուման, որ նախ  
մասամբ ի Բաշմալիքէն և ապա առանձին  
հաստորով եւս հրատարակեցաւ. յորում՝ թէ  
եւ մեծարդոյ հեղինակին գրիչն՝ կարծես չէ  
ունեցած այն ազատ թոխը, որով կարենա-  
ցոյց տալ իւր խոր հմտութիւնը աւելի բնա-  
ձակօրէն, որքան իրեն միւս գործերուն մէջ.  
Սակայն նկատելով թէ ինչպիսի բովանդակ-  
ւածք եւ անխնայ աշխատութեան արդիւնք է,  
այնքան բուսական բաւերու հաւաքումն, հան-  
դերձ նախնեաց վկայութեամբք եւ օրինակ-  
ներով, թէ ի տպագրի եւ թէ ի ձեռագրի  
ազգային գրոց, եւս եւ յօտար ճանապարհոր-  
դագրաց, հանդերձ իւրաքանչիւր բուսոց հա-  
մապատասխանող յոյն, լատին, փռանկ, եւ  
յաճախ եւս արաբացի, պարսիկ կամ թուրք  
անուններով, կարգացողն առիպուած է խոս-  
տովանիլ, թէ յիբաւի շատ պատուաբեր աշխա-  
տութիւն մ'է այն մեր արդի գրականութեան,  
եւ օգտակար՝ ըստ բազում գլխոց՝ շատերու,  
նա՛ մանաւանդ ազգային բժշկաց, բուսաբանից,  
բառախոսից, եւ այլոց : Բայց գոցէ պիտի  
զարմանան շատք, երբ Հայօթի անունն  
իրենց աչաց հանդիպի, եւ ըսեն. — Ի՞նչ  
է այդ, Բնուոյ դարձեալ մէջ բերել հին ա-  
նուններն հին գրքեր, մինչդեռ նորարարաց ան-  
գամ հազիւ թէ մամուլէն ողջունուածք՝ վաղ  
խիկ արդէն մոռացութեան արուած են : —  
Սակայն այս զանգատն ամէն կողմէ չի լը-  
սուիր եւ ամէն տեղ արձագանգ չի գտ-  
ներ, այլ միայն Պոլսոյ մէջ հրատարակուող  
մի քանի թերթիւստիկ եւ աղայոց գաղա-  
փարներու վրայ ծրագրուած թերթերու շրջա-  
նակներուն մէջ, որոց այն միայն յարգի եւ  
սիրելի է և ինչ որ նոր, սերեւեթ, տղայաւ